

ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԻՏԻՐԻՄ ՄԻՏՐՈՊՈԼԻՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 80 ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 33-ԱՄՅԱԿՆԵՐԻ ԱՌԹԻՎ

ՁԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ,
Ի ՔՐԻՍՏՈՍ ՍԻՐԵՑՅԱԼ ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ,

Օրհնյալ է Ձեր 80-ամյակը: Խնդրում եմ ընդունել սրտագին շնորհավորանքներ և անկեղծ բարեմաղթություններ:

Մոսկվայի Պատրիարքարանի հրատարակչության բաժնի բոլոր աշխատակիցների հետ, որոնք Ձեզ սիրում են և խորապես պաշտում, ցանկանում եմ Ձեզ Աստուծո անվնաս ողորմությունը, խաղաղություն և քաջառողջություն, բարգավաճում Հայ Առաքելական Եկեղեցուն, Հայաստանին՝ բարօրություն և երջանկություն:

Տիրոջ նախախնամությանը հաճելի էր, որ Ձեր 80-ամյակը համընկներ Ձեր քահանայապետական ծառայության 33-ամյակին, և դա իրոք նշանակալի զուգադիպություն է: Հայ Եկեղեցին հպարտանում է Ձեզանով՝ իր գերագույն առաջնորդով, որը արժանացել է համաշխարհային քրիստոնեության խորին հարգանքին: Ձեր հայրապետական փառքում արտացոլվում է Ձեր անձի փայլը: Դեռ պատանեկան տարիներից Դուք շնորհազարդված եք Տիրոջ կողմից Ձեզ տրված փայլուն տաղանդով և հոգևոր բազում պարգևներով: Տերը՝ ամենայն բարյաց Պարգևատուն, շնորհել է Ձեզ հոգևոր ամրություն և սրտի իմաստություն, դժվարաւգույն, սակայն նաև գեղեցիկ կյանք՝ համակված ժողովրդի մեծ սիրով:

...Ռուս Պրավոսլավ և Հայ Առաքելական Եկեղեցիներին հարազատացնում է հոգևոր մեծ ընդհանրությունը: Խորին բարեկամական զգացմունքներ էր տածում Ձեր նկատմամբ իմ հոգևոր ուսուցիչ և հայր սրբազնագույն Պատրիարք Ալեքսին: Դրան ես վկա եմ:

Նորին Սուրբ Օծություն Պիմեն Պատրիարքը Ձեզ անվանել է «եկեղե-

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

ցական նավի իմաստուն նավապետ, կրոնական-ազգային օջախի շուրջ հայերի հոգևոր միավորող»: Դա իրոք այդպես է:

...Հայ Եկեղեցին հաջողությամբ տանում է բարոյա-հայրենասիրական և մշակութային մեծ աշխատանք՝ աջակցելով պատմության ուսումնասիրմանը, ընտանիքի ամրապնդմանը, բարեգործության և գթասիրության զարգացմանը, այլադավանների նկատմամբ հանդուրժողության, եղբայրական փոխըմբռնման, համագործակցության և բարի կամեցողության ոգով·

Դուք մշտապես կոչ եք անում հայերին և ադրբեջանցիներին, հայերին և վրացիներին, Կովկասի այլ ազգերին՝ հարգել մեկը մյուսի ազգային և կրոնական-մշակութային ինքնությունը՝ պահպանելով բարի դրացիական հարաբերություններ: Դուք այժմ էլ առաջնորդվում եք Ավետարանի ոգով, իբրև բարոյական չափանիշ՝ օգնելով հայերին հաղթահարելու ճգնաժամային իրավիճակը, որը առաջ է եկել Սումգայիթի և Լեռնային Ղարաբաղի իրադարձություններից: Այսօր, երբ իրավիճակը այդ շրջանում նորից սրվել է, մենք հուսով ենք, որ Ձեր հեղինակավոր խոսքը կրկին կըդառնա խաղաղեցման գրավական:

...Ռուս Պրավոսլավ Եկեղեցու զավակները երջանիկ էին ողջունելով Ձեզ վերջերս տեղի ունեցած տոնակատարությունների ժամանակ՝ նվիրված Ռուսաստանի մկրտության 1000-ամյակին: Դուք միշտ ցանկալի և թանկագին հյուրն եք մեր հրատարակչական բաժնի:

Մենք աղոթում ենք այն բանի համար, որ ամենափրկիչ Տերը շնորհի Ձեզ երկար կյանք այս աշխարհում և երկար-երկար տարիների Իր ողորմության բարիքները, որպեսզի ամրապնդի Ձեզ հայ ժողովրդի կյանքում այս պատասխանատու պահերից մեկի ժամանակ՝ Խորհրդավոր Լույսի ներքո:

Սիրով ի Քրիստոս՝

ՊԻՏԻՐԻՄ

ՎՈԼՈԿՈԼԱՄԻ ԵՎ ՅՈՒՐԵՎԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ,
ՄՈՍԿՎԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՍՆ
ԲԱԺՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա,
24 սեպտեմբերի 1988 թ.